ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի մարտի 2-ի, ժամը 13:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին 2021 թվականին առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Թ.Մ.Մկրտչյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի որոշումը՝ հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին 2021 թվականին առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը:

ՑԱՆԿ

ՀՀ պետական կառավարման մարմիններին 2021 թվականին
առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված
հետազոտական թեմաների

N	ՀՀ պետական կառավարման մարմինը	ՀՀ պետական կառավարման մարմնի առաջարկած հետազոտական թեման
1.	ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ	Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման մարտահրավերներն ու հնարավորությունները
2.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն

3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում
4.	ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների կառավարման նախարարություն	ՀՀ սահմանամերձ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակումը
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ արդյունաբերության մրցունակության բարելավման հնարավորությունները
6.	ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն	ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն (կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. մարտի 2

Երևան